

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ
26-ԻՆ ԺԱՄԸ 11:00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՆ
ՋԱՐԳԱՑՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

Մասնակցում էին՝

Խորհրդի անդամներ՝

Ա. Գևորգյան	ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարարի պաշտոնակատար
Ա. Հարությունյան	ՀՀ բնապահպանության նախարարի պաշտոնակատար
Տ. Դավթյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարի պաշտոնակատար
Դ. Դումանյան	ՀՀ առողջապահության նախարարի պաշտոնակատար
Վ. Գաբրիելյան	ՀՀ ֆինանսների նախարարի պաշտոնակատար
Ա. Մովսիսյան	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարի պաշտոնակատար
Ա. Կարապետյան	ՀՀ գյուղատնտեսության նախարարի պաշտոնակատար
Ա. Ասատրյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի պաշտոնակատար
Հ. Հակոբյան	ՀՀ Ազգային ժողովի սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ
Ռ. Մարտիրոսյան	ՀՀ ԳԱԱ-ի նախագահ
Կ. Դանիելյան	<<Հանուն մարդկային կայուն զարգացման ասոցիացիա>> ՀԿ-ի նախագահ, ԿԶԱԽ-ի քարտուղար
Բ. Բուզետտո	ՀՀ-ում ՄԱԿ-ի մշտական համակարգող, ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի մշտական ներկայացուցիչ
Գ. Օզանեզովա	ՀՀ բուսաբանական ընկերության փոխնախագահ
Հ. Սարգսյան	<<Տապան էկո-ակումբ>> ՀԿ-ի նախագահ
Ա. Ղազարյան	Հայաստանի արդյունաբերողների և գործարարների (գործատուների) միության նախագահ

Ե. Մանվելյան	<<Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի>> ՀԿ-ի նախագահ
Ա. Վերմիշյան	<<Բուրգ>> բնապահպանական երիտասարդական ՀԿ-ի նախագահ
Ա. Իսկոյան	<<Շրջակա միջավայր իրավական պահպանության կենտրոն>> ՀԿ-ի նախագահ
Հրավիրվածներ՝	
Տ. Գևորգյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավարի տեղակալ
Ս. Պասյան	ՀՀ բնապահպանության նախարարի պաշտոնակատարի առաջին տեղակալ
Վ. Տերտերյան	ՀՀ տարածքային կառավարման նախարարի պաշտոնակատարի առաջին տեղակալ
Կ. Հարությունյան	ՀՀ կրթության և գիտության նախարարի պաշտոնակատարի տեղակալ
Ա. Կարապետյան	ՀՀ քաղաքաշինության նախարարի պաշտոնակատարի տեղակալ
Յ. Պողոսյան	ՀՀ ազգային վիճակագրական ծառայության ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ
Ա. Միրզախանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական վարչության պետ
Ս. Կեմկադզե	ՄԱԿ-ի զարգացման ծրագրի մշտական ներկայացուցչի պաշտոնակատար
Դ. Հարությունյան	ՄԱԿ-ի կլիմայի փոփոխության ծրագրերի համակարգող
Ա. Թադևոսյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի վարչության պետ
Ա. Մինասյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի վարչության պետ
Ա. Մարգարյան	ՀՀ կառավարության աշխատակազմի տարածքային զարգացման և բնապահպանական վարչության գլխավոր մասնագետ

Գ. Պողոսյան	ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի գլխավոր մասնագետ
Լ. Սարգսյան	<<Հանուն կայուն մարդկային զարգացման ասոցիացիա>> ՀԿ-ի ներկայացուցիչ

1. Բացում, օրակարգի ներկայացում, հաստատում

(Կ. Դանիելյան, Հ. Սարգսյան, Տ. Սարգսյան)

2. ՄԱԿ-ի <<Ռիո+20>> կայուն զարգացման գազաթաժողովի արդյունքները, կամավոր միջազգային գործընկերությունները և ՀՀ-ի մասնակցությունը <<Post-Rio>> համաշխարհային գործընթացին

(Կ. Դանիելյան, Բ. Բուզետտո, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) ընդունել ի գիտություն <<Հանուն կայուն մարդկային զարգացման ասոցիացիա>> ՀԿ-ի, UNEP ազգային կոմիտեի նախագահ Կ. Դանիելյանի կողմից ներկայացված ՄԱԿ-ի <<Ռիո+20>> կայուն զարգացման գազաթաժողովի արդյունքները, կամավոր միջազգային գործընկերությունները և ՀՀ-ի մասնակցությունը <<Post-Rio>> համաշխարհային գործընթացին.

2) հանձնարարել՝

ա. <<Հանուն կայուն մարդկային զարգացման ասոցիացիա>> ՀԿ-ի, UNEP ազգային կոմիտեի նախագահ, ԿԶԱԽ-ի քարտուղար Կ. Դանիելյանին՝ ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավարի տեղակալ Տ. Գևորգյանի և շահագրգիռ նախարարությունների հետ համատեղ քննարկել և ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանին ներկայացնել <<Հետ-Ռիո+20>> գործընթացն ապահովելու նպատակով միջգերատեսչական հանձնաժողովի կազմը, ինչպես նաև գործողությունների ծրագիրը,

բ. շահագրգիռ ՀԳՄ-ների ղեկավարներին՝ <<Հետ-Ռիո+20>>-ի շրջանակներում ակնկալիքների և սպասելիքների մասով գործնական առաջարկությունների առկայության դեպքում դրանք ներկայացնել խորհրդի քարտուղարությանը:

**3. ՄԱԿ-ի <<Կրթություն հանուն կայուն զարգացման>> տասնամյակի
իրականացումը ՀՀ-ում>> առաջընթացը, խնդիրները և
հեռանկարները**

(Կ.Հարությունյան, Գ. Պողոսյան, Գ. Օզանեղովա, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ ընդունել ի գիտություն ՀՀ կրթության և գիտության նախարարի պաշտոնակատարի տեղակալ Կ. Հարությունյանի և ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի գլխավոր մասնագետ Գ. Պողոսյանի կողմից ներկայացված զեկույցները:

4. Կրթական ծրագրերի ինստիտուցիոնալ հիմքերի ստեղծման մասին

(Ա. Միրզախանյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ ընդունել ի գիտություն ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական վարչության պետ Ա. Միրզախանյանի կողմից ներկայացված կրթական ծրագրերի ինստիտուցիոնալ հիմքերի ստեղծման մասին տեղեկատվությունը:

5. Կայուն զարգացումների գնահատման մոտեցումները և խնդիրները

(Յ. Պողոսյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ ընդունել ի գիտություն ՀՀ վիճակագրության ազգային ծառայության խորհրդի անդամ Յ. Պողոսյանի կողմից ներկայացված կայուն զարգացման գնահատման հայաստանյան մոտեցումները և մեթոդաբանությունը:

**6. ՀՀ Սյունիքի և ՀՀ Վայոց Ձորի արոտավայրերը ԻԻՀ և ԱՄԷ
քաղաքացիներին վարձակալության տրամադրելու մասին**

(Ա.Վերմիշյան, Ա. Գևորգյան)

ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարարի պաշտոնակատար Ա. Գևորգյանն անդրադառնալով ԿԶԱԽ-ի անդամ, <<Բուրգ>> ՀԿ-ի նախագահ Ա.Վերմիշյանի կողմից բարձրացված խնդրին, տեղեկացրեց, որ ՀՀ Սյունիքի մարզպետարանի կողմից նույն օրը տրվել է հերքում, ինչպես նաև պարզաբանմամբ հանդես է եկել ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը և նշել են, որ այս հարցի շուրջ նոր զարգացումներ չեն սպասվում:

7. ԱՅԼ ՀԱՐՑԵՐ

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) առաջարկել <<Տապան էկո-ակումբ>> ՀԿ-ի նախագահ Հ. Սարգսյանին 2013 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտած հարկային օրենսդրության փոփոխությունների վերաբերյալ ներկայացված դիտողությունները գրավոր ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարի պաշտոնակատար Վ. Գաբրիելյանին և ՀՀ էկոնոմիկայի նախարարի պաշտոնակատար Տ. Դավթյանին:

2) հանձնարարել ՀՀ ֆինանսների նախարարի պաշտոնակատար Վ. Գաբրիելյանին և ՀՀ էկոնոմիկայի նախարարի պաշտոնակատար Տ. Դավթյանին՝ <<Տապան էկո-ակումբ>> ՀԿ-ի նախագահ Հ. Սարգսյանի կողմից ներկայացված գրավոր դիտողությունները քննարկել և խնդիրների բացահայտման դեպքում տեղեկացնել ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ



ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ